ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԵՎ «ՄՈՒԼՏԻ ՎԵԼՆԵՍ ԿԵՆՏՐՈՆ» ՄԱՐԶԱԱՌՈՂՋԱՐԱՐԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐԻ ՄԻՋԵՎ

Սույն համագործակցության հուշագիրը (այսուհետ՝ Հուշագիր) կնքվում է «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի (այսուհետ՝ Ինստիտուտ) և «Մուլտի Վելնես կենտրոն» մարզաառողջարարական համալիրի (այսուհետ՝ Համալիր) միջև:

Հաշվի առնելով, որ Կողմերն ընդունում են փոխադարձ համագործակցությունը և փորձի փոխանակումը.

Նկատի ունենալով, որ համատեղ համագործակցությունը հնարավոր է միայն կառուցողական փոխգործակցության և փոխօգնության կազմակերպմամբ.

Կարևորելով ուսանողների և ապագա մարզիչ–մանկավարժների պրակտիկ ոլորտում կարողությունների զարգացումը.

Ընդունելով Ինստիտուտի և Համալիրի պատրաստակամությունը ուսանողների պրակտիկաների, վերապատրաստման դասընթացների և համատեղ միջոցառումների կազմակերպման համատեքստում.

Հիմք ընդունելով սույն Հուշագիրը և փոխադարձ պայմանավորվածությունները.

Կողմերը համաձայնեցին հետևյալի շուրջ՝

1. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ

1.1 Սույն Հուշագրով Կողմերը նախատեսում են Հայաստանի Հանրապետության օրենսդրության շրջանակներում համագործակցել հուշագրի 2-րդ մասով նախատեսված ուղղություններով՝ իրենց հնարավորությունների, միջոցների և փորձի կիրառմամբ:

2. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Ինստիտուտը պատրաստակամ է սպորտի ոլորտում պրակտիկ թեմաներ առաջարկել ուսանողներին՝ Ինստիտուտի մասնագիտական ամբիոններում և/կամ Համալիրում հետազոտություններ իրականացնելու, իսկ Համալիրը իր պատրաստակամություն է հայտնում գործուն և առարկայական աջակցություն ցուցաբերել այդ հետազոտություններն իրականացնողներին.

2.2 Սույն Հուշագրով Ինստիտուտը և Համալիրը համագործակցում են նաև

2.2.1 Համաժողովների, սեմինարների, խորհրդակցությունների, վերապատրաստման դասընթացների կազմակերպման միջոցով,

2.2.2 Ինստիտուտի և Համալիրի գործունեության ոլորտներին առնչվող համապատասխան նյութերի հրատարակման գործում,

2.2.3 Սույն Հուշագրի գործողության շրջանակներում Ինստիտուտի և Համալիրի գործառույթների կատարման համար, ըստ աշխատանքային անհրաժեշտության, մարզաբազաների, տարածքների, գույքի օգտագործման, ինչպես նաև Ինստիտուտի շրջանավարտներին տվյալ ոլորտում Համալիրում աշխատանքի անցնելուն աջակցման հարցերի շուրջ,

2.2.4 Իրականացնում են փոխայցելություններ ուսանողական պրակտիկաների ընթացքում,

2.2.5 Համատեղ իրականացվող աշխատանքների արդյունքների, դրանց խոչընդոտող հանգամանքների մասին տեղեկատվություն հայցելու և ստանալու միջոցով,

2.2.6 Ինստիտուտի ուսանողների մասնագիտացմանն առնչվող գիտագործնական և մասնագիտական կատարելագործման, ինչպես նաև գիտելիքների և հմտությունների ներդրման ուղղություններով:

3. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

3.1 Ինստիտուտը և Համալիրը սույն Հուշագրի սահմաններում իրենց գործառույթներն իրականացնում են օրինականության, փոխօգնության, համագործակցության սկզբունքներով:

4. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒԹՆԵՐ

4.1 Սույն Հուշագիրը կնքվում է երկու օրինակից հայերեն լեզվով, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

4.2 Սույն Հուշագրի լրացումներն ու փոփոխությունները համարվում են Հուշագրի անբաժանելի մասը:

4.3 Սույն Հուշագիրը չի առաջացնում ֆինանսական պարտավորություններ Կողմերի համար:

4.4 Յուրաքանչյուր կողմ կարող է միակողմանիորեն խզել Հուշագիրը՝ այդ մասին մեկ ամիս առաջ տեղյակ պահելով մյուս կողմին:

4.5 Սույն Հուշագիրը կնքվել է Երևան քաղաքում, 2022 թվականի մարտի 25–ին:

4.6 Սույն Հուշագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում անժամկետ:

5. ԿՈՂՄԵՐԻ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ինստիտուտ	**Համալիր**
«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամ	«Մուլտի Վելնես կենտրոն» մարզաառողջարարական համալիրի
ք. Երևան, Ալեք Մանուկյան 11	Ք.Երևան Ալեք Մանուկյան 11
Ռեկտոր՝ Դավիթ Խիթարյան	Տնօրեն՝ Իշխան Սեդրակյան
ստորագրություն Հ.Տ.	ստորագրություն Կ.Տ.